ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Խորենացու 7

< 08 > հունիսի 2016թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 1258 /02

Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս քննարկելով <<Ժապավեն>> ՍՊ ընկերության վերաբերյալ վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների <<Ժապավեն>> ՍՊ ընկերությունը /ՀՎՀՀ 00425762, հասցեն ք. Երևան, Վարդաշեն 10 փողոց, 6/1 տուն/ չկատարված հարկային պարտավորությունները 18.05.2016թ. դրությամբ կազմում են 130.192 դրամ, որոնք առաջացել են հետևյալ հարկատեսակներով՝

Սոցիալական վճարի (ամսեկան) գծով պարտավորությունը կազմում է 3.000 դրամ, որն ամբողջությամբ ապառքի գծով է և առաջացել է 2016թ. ապրիլ ամսվա ամփոփ հաշվարկի գումարից:

Եկամտային հարկի գծով՝ 93.116 դրամ, որից ապառք՝ 80.245 դրամ, տույժ 12.871 դրամ և առաջացել է 2015 թվականի նոյեմբերից 2016թ. ապրիլ ամիսների հաշվարկների գումարից:

Շրջանառության հարկի գծով՝ 34.076 դրամ, որից ապառք՝ 29.884 դրամ, տույժ 4.192 դրամ և առաջացել է 2015 թվականի 4-րդից 2016թ. 1-ին եռամսյակների հաշվարկների գումարից:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ <<Ժապավեն>> ՍՊ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 29.1 հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին 21.06.2016թ. ընկերության տնօրենը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վարույթի նյութերին ծանոթանալու համար չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և տուգանքներ:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է: Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով հարկային պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 29.1 հոդվածով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Ժապավեն>> ՍՊ ընկերությունից գանձել 130.192 դրամ պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել /ֆիզ. անձին կամ/ հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին կամ վերադաս վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____
Ստորագրություն | հարկ վճարողի /կամ ֆիզ. անձի/ պաշտ. անձի անուն ազգանուն | ամսաթիվ

Կատ. առաջատար մասնագետ
Տիգրան Սարուխանյան հեռ. 060- 54-91-83